ԱԶԳԱՅԻՆ

ԱՐԱՐԱՏԻ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ.

Նորին Վեհափառութեան օրհնաբեր կոնդակից ընթերցողը տեսնում է, որ Արարատը ներկայ Թուականին նոր խմբագրութեամբ պէտք է լոյս տեսնէ, անփոփոխ պահպանելով իւր ուղղութիւնը: Քանի որ նախկին խմբագրութեան բոլոր անդամները մնում են կրկին գործի մէջ, հասկանալի է ըստ ինքեան, որ ոչ միայն Թերթի ուղղութիւնը հիմնական փոփոխութիւն չի կրի, այլ եւ նորա ոյժերը ամենաւին չեն պակասի: Ընդհակառակն՝ խմբ. յանձնաժողով կազմելով Մայր Աթոռի միաբանութեան եւ ճեմարանի ուսուցչական խմբի այն անդամներից, որոնք, իբրեւ ներկայացուցիչ մէն մի հաստատութեան, պէտք է նպաստեն աւելի սերտ կերպիւ կապելու այդ հաստատութիւնները պաշտօնական Թերթի հետ՝ Նորին Ս. Օծութեան նպատակն է անշուշտ իրօք եւ ըստ ամենայնի «միաբանութեան ոգեան» դարձնել այդ Թերթը եւ միջոց տալ աւելի բազմակողմանի եւ ճոխ կերպով հրապարակ հանելու այն բոլոր գրական արդիւնքները, որ Մայր Աթոռը իւր ունեցած արդի ոյժերով ս. Եկեղեցոյ պաշտօնեաների եւ հօտի կրօնական, բարոյական եւ մտաւոր հրահանգութեան համար հրապարակ հանել կարող է, կամ այն պաշտօնական տեղեկութիւնները, որ նա հրապարակ հանել պարտաւոր է:

Ներկայ խմբագրութեան ամենամեծ բաղձանքն այն է, որ հայ հասարակութիւնը այդ աչքով եւ՛ նայէ Արարատի վերայ՝ կանխակալ կածիքներով պաշարուած նորա մէջ այս եւ այն անձի կամ ուղղութեան մասնաւոր տրամադրութիւն, դիտումներ, շահեր չորոնէ, այլ ընդունէ նոյն սիրով եւ համակրութեամբ, ինչպէս պէտք է ընդունէր ս. Էջմիածնից եկած ամեն մի նուէր: Թող նա միշտ քննադատական հայեացքով նայէ՝ դատէ եւ դատապարտէ, երբ Թերթն իւր օրինաւոր ուղղութիւնից շեղուում է, իւր պարտականութիւնները ճշդութեամբ չէ կատարում, բայց կարդայ նախ, քննէ անաչառ ոգւով ու այնպէս դատէ: Այդպիսի դատաստան ուրախութեամբ կընդունուի միշտ, եւ խմբագրութիւնը կաշխատէ որչափ կարելի է շատ օգուտ քաղել նորանից:

Առհասարակ Արարատը իւր կոչման բարձրութեան վերայ պահելու եւ աւելի ու աւելի մեծ յաջողութեամբ յառաջ տանելու համար անհրաժեշտ է, որ նորա յաջողութեան նախանձախնդիր ոչ միայն Մայր Աթոռի միաբանութիւնն, այլ եւ ամբողջ հայ հասարակութիւնը լինի. որ նա աշխատակիցներ ունենայ երկրի բոլոր կողմերում, ուր հայ մարդիկ են ապրում, ուր հետաքրքրութիւն կայ հայ անուան համար. Այդ նպատակաւ խմբագրութիւնը սկսել է արդէն մասնաւոր կերպով դիմումներ անել այն անձանց, որոնց աշխատակցելու ընդունակութեան եւ յօժարութեան վերայ վստահութիւն ունի: Նոյն դիմումը կրկնում է նա այստեղ հրապարակաւ. բոլոր այն անձինք, առանց խտրութեան, որոնք Արարատի որ եւ է մասի համար նիւթ մատակարարել կարող են՝ հրաւիրուում են ի սրտէ, չինայել իրենց ձեռնտուութիւնը: Շնորհ. դպիր Գալուստ եւ ճեմարանի ուսուցիչները, որոնց թուում յատկապէս պ. Ս. Մանդինեան՝ կշարունակեն, եւ ինչպէս յուսով ենք աւելի եռանդով, մշտական աշխատակիցներ լինել:

Սակայն այդ եւս բաւական չէ: Արարատը լինելով բոլոր դասակարգերի համար մատչելի, բազմակողմանի եւ ամենաաժանագին մի ամսաթերթ, ցանկալի էր, որ բաժանորդներ ունենար, եւ որ աւելի կարեւորն է՝ կարդացուէր իրօք հասարակութեան բոլոր խաւերի մէջ: Այդ նպատակաւ պարտք է դրուում յատկապէս եկեղեցական պաշտօնեաների վերայ՝ Արարատի պարտադիր բաժանորդագրութիւնն իբրեւ պատիւ չնկատել,

այլ աշխատել որչափ կարելի է աւելի եւ աւելի ընդարձակ շրջաններում՝ ընթերցանութեան առարկայ դարձնել իրենց ստացած թերթերը եւ նորանոր բաժանորդներ վաստակել: Մեր հասարակութեան առաջ կրօնական ընթերցանութեան համար այնչափ քիչ նիւթ է դրուում՝ որ ցանկալի էր՝ գոնէ այս կողմով Արարատից բազմաթիւ օգտուողներ լինէին. բայց նաեւ անցեալ պատմութեան՝ ընդհանուր եւ ազգային կեանքի աչքի ընկնող երեւոյթների՝ գիտութեան արդիւնքների մասին՝ փոքր ի շատէ գաղափար կազմելու համար՝ Արարատը կարող էր ոչ սակաւ տեղերում՝ ամենայարմար միջնորդ հանդիսանալ. ինչպէս եւ հասարակական կենցաղի՝ առողջապահութեան ու տնտեսութեան վերաբերեալ ծանօթութիւններով՝ որոնք ըստ բարձր հաճութեան Նորին Վեհափառութեան՝ պէտք է այսուհետեւ իրենց տեղն ունենան նորա էջերում՝ շատերին հետաքրքիր եւ օգտակար լինել:

Արարատի խմբագրութեան համար շատ պարզ է՝ թէ որչափ ջանք է հարկաւոր եւ որչափ պակաս են իւր սեփական ոյժերը այդ բոլոր պահանջներին բաւականութիւն տալու՝ բաւականութիւն տալու մանաւանդ կրօնական —եկեղեցական կեանքի վերաբերեալ պահանջներին՝ որ է՛ եւ պէտք է մնայ նորա գլխաւոր նպատակը. սակայն նա յոյս ունի՝ թէ ս. Էջմիածնի Միաբանութեան դուրսը գտնուած անդամներն եւս՝ Նորին ս. Օծութեան հրաւէրը լսելով՝ գործնական օժանդակութեամբ պէտք է լրացնեն ներկայ ոյժերի պակասորդը՝ եւ թէ առհասարակ բազմաթիւ եկեղեցական ու աշխարհական անձինք պէտք է գտնուին՝ Մայր Աթոռի պատուին եւ նորա հոգեւոր գաւակների հոգեւոր կրթութեան նախանձախնդիր՝ որոնք պէտք է չինայեն իրենց կարողութեան չափով նպաստելու միակ կրօնական—բարոյական—մանկավարժական—ազգային թերթի բարգաւաճման եւ բարւոք յառաջադիմութեան: Բաւական է միայն որ հետաքրքրուին նորանով եւ նոյն իսկ այդ հետաքրքրութեամբ ստիպեն իւր գործունէութեան սահմաններն ընդարձակել:

Թէ՛ հասարակական եւ թէ մանաւանդ եկեղեցական կեանքի մէջ տեղի են ունենում՝ բազմաթիւ երեւոյթներ՝ որոնք Արարատի միջոցով կարող են ուշադրութեան ու քննադատութեան առարկայ դառնալ. թող ամեն կողմից տեղեկութիւններ եւ հարցեր տան նոցա մասին՝ խմբագրութիւնը կաշխատէ իւր ձեռքի տակ եղած միջոցներով՝ ձեռնհաս անձանց դիմելով՝ պարզաբանել ինչ որ կարող է եւ ուղեցոյց հանդիսանալ:

Ցաւախտ տրտունջներ են լինում՝ Արարատի անկանոն հրատարակութեան եւ ցրման նկատմամբ. թող այսուհետեւ այդ տրտունջներն անմիջապէս խմբագրութեան յայտնուին՝ որ կաշխատէ ամեն կերպ բաւարարութիւն տալ նոցա եւ փութով վերացնել առիթները:

— Ուշ սկսելով իւր գործունէութիւնն եւ ստացած չլինելով տակաւին թերթեր ու պատրաստի նիւթեր նոր տարուայ համար՝ նա չկարողացաւ ներկայ համարը իւր ծրագրի համաձայն ամփոփել եւ վաղօրօք հրատարակել՝ բայց կաշխատէ՝ որ յաջորդ համարները աւելի կանոնաւոր կազմութիւն ունենան եւ որքան կարելի է շուտով լոյս տեսնեն:

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ·

ՄԱՅՐ ԱԹՈՌ·

Ազգիս Վեհ. Հայրապետը Իւր բարձր գոհունակութիւնը եւ հայրապետական օրհնութիւնն է յայտնում՝ այն ամեն յարգելի ազգայիններին՝ հաստատութեանց ներկայացուցիչներին՝ թեմ: առաջնորդներին եւ փոխանորդներին՝ որոնք փութացել էին շնորհաւորել Նորին Վեհափառութեան Նոր Տարին՝ Ծննդեան Տօնը եւ Իւր Անուանակոչութեան տօնը. որոնց ամէնքի եւ առ հասարակ իւր սիրեցեալ հօտի համար հայցում է Աստուածանից առողջութիւն՝ յաջողութիւն եւ բարօրութիւն: